ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սյունյաց երկիր թերթ

Հասցե՝ ՀՀ, ք.Կապան, Շահումյան 20/32
Address: Shahumian str. 20/32, Kapan, RA
Internet: www.syuniacyerkir.am
Email: syuniacyerkir@mail.ru
Phone: (+374 0285) 5 25 63
(+374 091) 45 90 47

«29» 01 2024թ.

Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանին

Հարգելի պարոն Առուշանյան

2024 թ. հուլիսի 13-ին լրանում է հայ արձակի խոշորագույն ներկայացուցիչ, Գորիսի արժանավոր զավակ եւ մեր տարածաշրջանին հավերժորեն պատիվ բերող Ակսել Բակունցի ծննդյան 125-ամյակը:

Մեր խմբագրակազմը նպատակ ունի հրատարակել «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համար՝ նվիրված Ակսել Բակունցին:

Այդ նախագիծն իրականացնելու համար փորձում ենք համագործակցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ՝ ակնկալելով մոտ 1 մլն դրամի աջակցություն:

Սակայն նախատեսված համարի նյութերի պատրաստման եւ համարի հրատարակման ընդհանուր ծախսը կազմում է 3 մլն դրամ (ծախսերի նախահաշիվը պատրաստ ենք ներկայացնել):

Խնդրում ենք Գորիսի համայնքապետարանի 1 մլն դրամի չափով աջակցությունը՝ Ակսել Բակունցի 125-ամյակին նվիրված հատուկ համարը հրատարակելու նպատակով:

Պարոն Առուշանյան, ակնկալում ենք դրական արձագանք, քանզի խոսքը բոլոր ժամանակների ամենամեծ գորիսեցու եւ հայ արձակի նահապետի մասին է:

Հարգանքով՝

Սամվել Ալեքսանյան